Զ.

Զինչ որ ես հետ ինձ արի, չէր արեր ոչ ոք հարամի.
Ծիշայ մի հալած ոսկի ի վետին ի վայր վաթեցի,
Անցաւ ի գետնին ներքու, ես դատարկ ի վայր մընացի.
Զետի խելքն ես ի՞նչ անեմ երբ առջի անունն աւիրի:

Է.

Ես ասեմ ու դու լըսէ՛, ա՛ռ ի քո մըտքունքդ անդիճէ՛.
Օղ արա՛ ականջըդ դի՛ր, զէտ կարմիր դեկան ծըրարէ՛.
Այն մարդուն խէչ մի՛ նըստիր՝ երբ երթաս ըզքեզ զըրուցէ,
Ըզնետըն յետ քեզ նետէ ու զաղե՛ղըն դառնայ պահէ:

Ը.

Երբ ես ի յաշխարհս եկի, գառն անպարտ՝ ու մեղք չունէի.
Ի յաւազանէն ծընայ, զէտ զմարգրիտ ցոլայի:
Մեծցայ մեղաւոր եղայ, իմ ոտօքս ի մեղք գընացի.
Զկամք սատանային արի, յանդենէն խապար չունէի:

Թ.

Զինչ զԱհարոնի գըլուխն որ ծաղկանց իւղովն օծեալ է,
Կամ ցօղ Հերմոնի լերին որ Սինայ քաղցըր ցօղեալ է,
Կամ ըզհամասփիւռ ծաղիկ՝ Սուկաւէտ լեառըն բուսեալ է,
Ոչ գարունըն ջուր կ’ուզէ, ոչ աշո՛ւնըն թոռմելու է.
Հանցգուն ծաղիկ ո՞վ տեսեր, զարարա՛ծըս շէն կու պահէ.
Նորա ծաղիկ ո՞վ ասէ՝ երբ նորա անուն Յիսուս է:

Ժ.

Այն մարդն որ առ դուրն երթայ, գէմ պիտի զդըժարն անդիճէ.
Շաքարին շատ ուտել չվայլէ, Ադամայ որդին անհոգ է.
Մըտիկ լեռներուն արա՛, խելօքնուն ասած մասալ է.
Այն որ բարձր է՝ ձիւն ունի, այն որ ցած՝ ի՞նչ խօշ կանանչ է:

ԺԱ.

Ի յԱրեւելից ի վար ելեր է մեր Տէրն ու կուգայ.
Ելէ՛ք որ ի դէմն երթանք, որ նորա սիրտըն չիմընայ.
Հընցգուն թագւոր փատիշահ ոչ եկեր է ’ւ ոչ պիտի գայ.
Արեւելք ինքն է նըստեր, յԱրեւմուտք հիւբմըն կու խաղայ: